

նին ձեռագիրները աչքէ անցուց, և դտաւ 360 տարուան ձեռագիր մը, որ կաթողիկոսական օծում չի յիշատակեր, այլ միայն օրհնութիւն և ձեռնադրութիւն: Բայց կան ուրիշ ձեռագիրներ ալ, որոնք ունին օծման կարգը և որոնցմէ ընդօրինակուած են էջմիածնայ և Սոսյ մէջ տպեալ օծման կարգերը: Եղրակացութիւնն այն եղաւ, որ այս անգամ ևս Հայ-Հռոմէական Կ. Պատրիարքներու համար գործադրուած սովորական արարողութիւնը տեղի ունենայ, մինչև որ օծման մասին յառաջիկային Սինոդով կարգադրութիւն մ'ըլլայ:

(Տաճար)

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

Պրաւօսլաւ Եկեղեցի.

«Церк. Вѣст.».— շաբաթաթերթը առում է, որ իրաւանց նախարարութիւնը ամուսնալուծութեան գործադրութեան մասին նոր ծրագիր է կազմում, որով թէև ամուսնալուծութիւնը ըստ առաջնոյն մնում է հոգևոր իշխանութեան իրաւանց տակ, բայց ամուսնալուծութեան առիթ եղող փաստերը քննելը և վճռելը յանձնուում է աշխարհիկ դատաստանի:

«Слово» լրագիրը հարցնում է՝ աշխարհիկ դատարանի վճիռը պարտաւորական պէտք լինի՞ հոգևոր դատարանի համար թէ ոչ, — այս հարցի համար որոշ ցուցում չկայ օրինագծի մէջ, այլ միայն ամուսնալուծական դատաւարութեան մէջ ձգձգումն մեծանում է:

Հոկտեմբերեանները մի օրինագիծ են ներկայացրել Պետական Դումային, պրաւօսլաւ ծուխի իրաւունքի մասին, որին Դումայի բոլոր կուսակցութիւններն էլ համակրութեամբ են վերաբերում, ուստի և յաջող լուծումն անկասկած է:

Լեհաստանում՝ մարիավիտները մեծ յաջողութիւն են գտնում, որով լեհական ազգասէրները վրդովման մէջ են, որովհետեւ մարիավիտները քարոզում են սէր առ Աստուած և առ ընկերն, և բոլորովին անտարբեր են դէպի ազգայնական միտումները։ Այս բանը Ռուս լրագրերը որքան վտանգաւոր են համարում լեհ ազգայնական գործի համար, նոյնքան օգտակար են գտնում ռուսներին համար։

Ռուս լրագրերը ասում է՝ «Այդ կլինի միջոց ռուս և լեհ ժողովուրդների մերձեցման համար հեռացնելով կաթոլիկական մեկուսացնող կուլտուրան լեհական հոգուց։ Եթէ, երբ և իցէ, հնարաւոր է լեհացիների հետ հաշտուելու մի կէտ գտնել, այդ կըտայ Մարիավիտութեան տարածումն»։ Իսկ Церк. Вѣст. շարաթաթերթը ասում է. «Սակայն հազիւ թէ Մարիավիտութիւնը կարողանայ այնպիսի ընդարձակ ծաւալ գտնել, որ դուրս մղի Լեհաստանից կաթոլիկական ոգին, սպիցիֆիքական խմորով։ Գոնէ առ այժմ դժուար է մի գրական բան ասել մարիավիտական շարժման մասին»։

Անցեալ շրջանում Գումայի ժողովրդական կրթութեան Յանձնաժողովն ի միջի այլոց վճռեց իրաւունք տալ պրիբաւտեան երկրի ու Լեհաստանի ժողովուրդներին ունենալ մայրենի լեզուով դպրոցներ, միւս օտարազգիներից՝ ըստ պահանջման մի քանի դեպուտատների՝ իրաւունք տրուեց և մահմետականներին ու Սարատովի գերմանացիներին։

Անդրէյ Եպիսկոպոսը մատնանիչ է լինում մի զանցառութեան վերայ, այն է, թոր այդ օրինագծով մկրտուած այլազգիները զրկում են մայրինի լեզուով դպրոց ունենալու իրաւունքից, դրանք ռուսերէն չիմանալով, ասում է Սրբազանը, չեն գայ ռուս դպրոցները, այլ կերթան մուսուլման թաթարական դպրոցը, ուր ուսումն թաթարերէն է և ընտել բոլորին։ Բնական է, որ մկրտուածները մուսուլման թաթարական դպրոցում չեն ամրապնդուիլ քրիստոնէական հաւատի մէջ և չեն մօտենայ ռուսներին»։

Եզրակացութիւնն այն է, որ պրաւունքաւ օտարազգիներին ևս պէտք է իրաւունք տրուի մայրենի լեզուով իրանց յատուկ դպրոցն ունենալ քրիստոնէական հոգով կրթուելու համար:

Հոգևոր դպրոցները (սեմինարիա) աւարտողներին 1910—1911 թուին համալսարաններում (բացի Վարչա-վայից, որի համար առաջուց գրուած է) ընդունելու համար սահմանուած է, որ հոգևոր սեմինարիաների ինչպէս 4 նոյնպէս և 6 դասարանները աւարտողները կ'ընդունուեն, միայն մատեմատիկայից, ֆիզիքայից, ֆրանսերէնից և գերմաներէնից լրացուցիչ քննութիւն տալով՝ վկայական ներկայացնելուց յետոյ:

«Кавказ»-ում (№ 153) կարդում ենք, որ Ռուսաստանի թեմական ժողովներից շատերը դիմել են Սրբ. Սինոդին, նիւթականի կողմից հոգևորականութեան՝ ժողովրդից կախումն ունենալու խնդրի մասին:

Թեմական ժողովների մեծ մասը եկեղեցական բարձր վարչութեան ուշադրութիւնը հրաւիրում է այն հանգամանքի վրայ, որ իրերի այժմեան դրութեամբ օրբազնագործ պաշտօնեաները հազիւ թէ կարողանան որ և է բարերար ազդեցութիւն ունենալ հօտի վերայ, որոնց հետ վերջին ժամանակներում, եկեղեցական տուրքեր և օրինակատարութիւնների վարձ պահանջելու պատճառով յառաջ են գալիս թիւրիմացութիւններ:

Շատ թեմերի հոգևորականութիւնը առաջարկում է Սրբ. Սինոդին միջոցներ մշակել, հոգևորականութեան օգտին ծխերից եկեղեցական տուրքերը հաւաքելու պարտքը դնել վարչութեան (ադմինիստրացիա) վերայ: Ինչպէս հաղորդում է «Русс. Вѣд.», այս խնդիրը խորհրդածութեան կենթարկուի Սինոդի նիստերից մէկում:

ՅՈՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՅԻ.

Հրատարակուել է Մակեդոնիայի մէջ գտնուած յոյն և բուլղար եկեղեցիների վերաբերութեամբ կայսերական իրադէ (հրովարտակ), Կ. Պօլսոյ յոյն պատրիարքարանը իւր պաշտօնագրի մէջ բուլղար եկեղեցին հերձուած է հրատարակել: Պատրիարքարանը այս միջոցին դիմել է, որպէս զի Մակեդոնիայի եկեղեցիները որպէս օրթոդոքս եկեղեցի մնան օրթոդոքս յոյներին, և բուլղարները որպէս հերձեալներ զըրկուած լինեն իրաւունքից:

Մշակի (№ 143) Կ. Պօլսոյ թղթակիցը առ այս աւելացնում է.

«Օրէնսդիր ժողովը ամեն տեղ իրաւունք կուտայ մեծամասնութեանը՝ տէր կանգնել եկեղեցիի մը, և պետութիւնը պարտադիր կընէ յանձն առնել շինել նոր եկեղեցի մը փոքրամասնութեան համար: Պատրիարքարանը կը պնդէ ֆէրմաններու տրամադրութեանը վրայ և կը հակի դէպի շերիաթական ուղղութիւն, իբրեւ թէ սահմանադրութիւնը գոյութիւն ունեցած չլիար:»

«Եկեղեցիներու այդ օրէնքը հրատարակուեցաւ թերթերու մէջ»:

Պէտք է նկատել, որ Մակեդոնիայում մրցութիւն կայ յոյն և բուլղար ժողովուրդների մէջ քաղաքական նկատումներով. բուլղարական եկեղեցին՝ որ վաղուց վտարանջել է տիեզերական պատրիարքի անմիջական իրաւասութիւնից և ունի իւր էքզարխը, կամենում է Մամեդոնիայի եկեղեցիներին ևս, իբրեւ բուլղար մեծամասնութեան պատկանող՝ իւր իրաւասութեան ենթարկել. Օսմանեան կառավարութիւնը դժ է տալիս բուլղարների այս ձգտման, պատճառելով մեծամասնութեան իրաւունքը:

«Յունաց պատրիարքը իր հանդիսաւոր դիմումը ըրաւ սուլթանին, ընդունուեցաւ անկէ ու իր դրաւոր թաղերին վրայ աւելցուց իր բերանացի բացատրութիւնները Մակեդոնիոյ եկեղեցիներու մասին: Նորին սրբազնութեան փափագն է, որ եկեղեցիները, տրուած ֆէրմաններու հիմքին վրայ, որոշապէս

ման յոյներուն, առանց նկատի առնելու «հերձուածող» բուլ-դարներուն առարկութիւնները, թէ եկեղեցիները շինուած են իրենց համար, իրենց դրամովը, որով պիտի ման իրենցը՝ էկզարքի հոգևոր պետութեան ներքև:

Սուլթանը ցաւակից ըլլալով յոյներու ցաւին՝ յայանած է, թէ, իբրև սահմանադրական կայսր, երկրին երկու գերագոյն ժողովներէն իրեն մատուցուած օրինական ծրագիր մը վաւերացնելէ զատ ոչինչ պիտի ընէր: Եւ յորդորած է, որ դո՛հ ըլլան յոյները այդ կարգադրութիւններէն:

Պատրիարքը, միշտ առանձնաշնորհումներուն վրայ կրթնած, կերպով իւր խորհուրդ տուած է Սուլթանին չվաւերացնել խորհրդարանական ծրագիրը, ճիշդ ինչպէս կընէ Անգլիոյ թագաւորը, երբ տեսնէ երկրին օրէնքներուն հակառակ ծրագիր մը խորհրդարանէն իրեն մատուցուած: Աւերջապէս պատրիարքը ըմբռնած է, թէ Մուհամմէդ Ե. չպիտի շեղի իր սահմանադրական ուղղութենէն և ձեռք ձեռքի պիտի քաշէ իր խորհրդարանին հետ:

Երկու օր է, որ ժողովներ, խորհրդակցութիւններ տեղի կունենան ֆէնէի պատրիարքարանի մէջ այդ պաշտօնական տեսակցութեան վրայ: Յոյն թերթերը այսօր կը հրատարակեն պատրիարքական յանձնախումբի մը տեղեկագիրը, որուն հինգ գլխաւոր կէտերն են հետևեալները.

1) Ազգային ժողով դումարել անմիջապէս, լուր տալով կառավարութեան:

2) Եթէ կառավարութիւնը մերժէ, դիմել եւրոպական պետութեանց, համաձայն միջազգային դաշնագիրներու:

3) Նրջաբերականով մը կոչ ընել ժողովուրդին՝ ներկայացնելով այն վտանգը, որու ենթարկուած են յոյն եկեղեցիին իրաւունքները:

4) Փակել եկեղեցիները:

5) Պատրիարքը, սինոդը, խառն ժողովը հաւաքական հրաժարական տան:

(Մօակ № 150):

